Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

354
F 43

354
Բ-43
04 MAR 2013
19 MAR 2010

Հրատարակութիւն Գ. Գալստեանի

300
1164-ԲԵ

Ի. ԲԵԼՈԿՈՆՍԿՈՒ

№ 9141.

ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԵՄՍՏՎՈ

Հ.Ս.խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
G.C.P.A. Publiczna Biblioteka
7/XI-1922
ՄՈՍԿՎԱ, ՄՅՈՍՆԻՑԿԱՅԱ
Ա. ՍՅԱՍԵՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
1903
11480

ԹԱՐԳՄ. Կ. ՋԱԼԱԼԵԱՆ

ТИФЛИССКАГО СОБРАНІЯ
БИБЛИОТЕКА

ԹԻՖԼԻՍ
Տպարան Տ. Մ. Ռոտինեանցի
1905

40.275

Дозволено цензурою. Тифлисъ 25 Іюля

ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԵՄՍՏՎՕ

Ձիչտ քառասուն տարի է անցկացել այն ժամանակից, երբ Ռուսիայում հիմնեցին հողատիրական հիմնարկութիւններ («Земскія учрежденія»), սակայն ազգաբնակութիւնը, ամբողջովին վեր առած, նրանց նշանակութիւնը պարզապէս հասկանալուց դեռ հեռու է։

Զեմստվոյի հակառակորդները այդ բանը նորանով են մեկնում, որ, իբր թէ, Ռուսական ազգը ունի, չգիտեմ, ինչ տեսակ՝ մի առանձին յատկութիւն, որի շնորհիւ նա, թէ չէ ցանկանում և թէ չի ցանկար երբէք՝ ինքնավարութիւն ունենալ, Ուրիշները պնդում են, որ մեր ազգաբնակութիւնը դեռ չէ հասունացել հողատիրական հիմնարկութիւնները ըմբռնելու ասիճանի։

Սակայն՝ ոչ մէկ ենթադրութիւնը և ոչ միւսը ուղիղ չեն։

Զեմստվոյի հետ թերի ծանօթութիւնը մեկնւում է նրա, գլխաւորապէս, վատ կազմակերպութիւնով, որի շնորհիւ ինքնավարութեան է հրաւիրած ազգաբնակութեան միայն ամենաաննշան մասը, իսկ անագին մեծամասնութիւնը այնքան հեռաւոր յարաբերութիւն ունի հողատիրական հիմնարկութիւնների հետ, որ հասկանալի է, թէ ինչու չէ կարող իրագործել նրաց էութիւնը։

Այս բանի մէջ մենք կը համոզուենք այն փաստերի հիման վրայ, որ գնելու ենք ներքևը, իսկ այժմ անցնենք անմիջապէս հողատիրական հիմնարկութիւնների հետ ծանօթանալու։

Բայց թէ, ռուսական զեմստվոյի մասին խօսելուց առաջ, խօսենք դեռ ուրիշ ազգերի հողատիրական հիմնարկութիւնների մասին, այն ազգերի, որոնք մեզանից առաջ ընտելացել են ինքնավարութեան հետ և տուել են մեզ նրա օրինակները։

Հին ժամանակները, երբ ազգութիւնները յամառ կերպով խարխափում էին խաւարի և տգիտութեան մէջ, նրանք լիովին հնազանդւում էին իրանց տիրապետներին։

Վերջինները, առանց որ և է ընդդիմադրութեան հանդիպելու, իրանց ուզածն էին անում։ Նրանք հաւաքում էին ինչ հարկ էլ որ կամենային, հարկադրում էին ազգաբնակութեանը իրանց համար ձրի աշխատել, այսինքն, որպէս մշակ կրել անձնական ծանր աշխատանք և ոչ ոք չգիտէր, թէ ժողովրդի քրտինքով աշխատած փողը, ուր է գնում, կամ թէ ինչու և ում համար են կատարւում այս կամ այն աշխատութիւնները։

Այդպէս շարունակւում էին գործերը ձիգ դարեր և մինչև օրս էլ շարունակւում են Ասիայի և Աֆրիկայի մեծ մասում։

Ինչ վերաբերում է Եւրոպային, նրա մէջ, բաց առած Տաճկաստանից, արդէն ոչ մի տէրութիւն չէ մնացել, որի ազգաբնակութիւնը կուրօրէն հնազանդւի իշխանութեանը, բոլորովին չհետաքրքրւելով, թէ ինչպէս են իրան կառավարում

և ինչպէս են տանում ազգային տնտեսութիւնը։ Եւրոպայում բոլոր երկրներից առաջ ինքնավարութիւնը ծագեց Անգլիայում։

Անգլիացոց մէջ ամենահին ժամանակներից բոլոր կոռով և փողով վճարելիք հարկերը հաւաքում էին կալւածքի եկամուտին համաձայն, ով աւելի հարուստ և ուժեղ էր, նա աւելի փող էր վճարում և նրա վրայ դրւում էր աւելի կոռ, իսկ ով աւելի չքաւոր էր և տկար՝ նա վճարում էր աւելի պակաս և կրում էր աւելի փոքր կոռ։

Այդ դրամական հարկը և կոռը (натуральная повинность) ժողովրդի մէջ բաժանելու համար մասնակցում էին բոլոր հարկատուները՝ թէ ազնուականները, թէ դիւղականները, թէ բանուորները և թէ հոգևորականները։ Նրանք բոլորեքեան ժողովւում էին մի տեղ և քննադատում էին ի միասին, թէ նրանցից իւրաքանչիւրը որքան դրամական հարկ պէտք է վճարէ և որքան կոռ քաշէ։

Սակայն տեղական գործերին մասնակցող ամեն մի անդամ պէտք է սեփականատէր լինէր, իսկ ով սեփականութիւն չունէր այդ իրաւունքից զրկւում էր։

Այն ժամանակները, երբ Անգլիայում մանր սեփականատէրեր (հողատէրեր) շատ կային, ամբողջ երկիրը բաժանած էր, տների թիւին համաձայն, զինուորական պարտաւորութիւն կրող՝ տասնեակների, հարիւրակների և շրջանների։ Անցկացաւ մի ժամանակ, հողը մանր սեփականատէրերի ձեռքից սկսեց անցնել խոշոր կալւածատէրների ձեռքը, այդ պատճառով առաջ եկան բազմաթիւ հող

չունեցողներ։ Այն ժամանակ, որպէս զի ազգաբնակութեան իրաւունքները պահպանեին տեղական գործերը կառավարելու մէջ, ազգաբնակութիւնը սկսեց բաժանուել՝ եկեղեցական ծխական ժողովներ, իւրաքանչիւր բնակիչ, որ հաշուում էր այս կամ այն եկեղեցու ծուխ և վճարում էր եկեղեցու և նրա սպասաւորաց պահպանութեան համար որ և է գումար, լիովին իրաւունք ունէր մասնակցել իր ծխական ժողովի բոլոր գործերին։

Միևնոյն ժամանակ նա կարող էր պատկանել իր ընտրած դաւանութեանը, կարող էր լինել՝ կաթոլիկ, լուտերական, հրէայ, մահմեդական, բոլոր դաւանութիւններին պատկանողները պարտաւոր էին կրել եկեղեցական ծախսեր և մասնակցել ծխական ժողովների գործերին։

Թէպէտ ազգաբնակութիւնից հարկեր էին հաւաքում և նրանք լոկ միայն եկեղեցական կարիքները լրացնելուն չէին մասնակցում, սակայն սկզբում ծխականները ընտրում էին միայն եկեղեցու երեցփոխներ և բաժանում էին իրար մէջ հարկերը։

Մի քիչ յետոյ նրանք սկսեցին վարել տեղական տնտեսական գործերը և այլ մասեր՝ չինում էին ճանապարհներ, հիմնում էին աղքատանոցներ, կազմակերպում էին տեղական ոստիկանութիւն։

Այս ձևով այդ մանր հողատիրական ինքնավարութիւնը գոյութիւն ունէր երկար ժամանակ։

Դրանից յետոյ նա բոլորովին փոխեց իր էութիւնը և վերջ ի վերջոյ խստառ խեղդամահ եղաւ։

Բանը սկսեց նրանից, որ ծխականները ամբողջովին ժողովելու տեղ, ինչպէս այդ առաջ էր,

սկսեցին ժողովել միայն մեծատուններ և խոշոր կալուածատէրներ, որոնց սովորաբար ընտրում էին եկեղեցական երեցփոխներ և աղքատների խնամակալներ։ Այդ իսկ անձինք ոչ միայն կալացում էին բոլոր գործերի վճիռները, այլ և հետ զհետէ իրաւունք ստացան իրանց միջից անդամներ ընտրել և այդպիսով նրանք բոլորովին մեկուսացան մնացած ծխականներից։

Սակայն դրանով գործը չվերջացաւ։ Անգլիայում շատ հին ժամանակներից հաշտարար դատաւորներ էին ընտրում հարուստ կալուածատէրներից։ Սկզբում նրանք միայն դատական գործեր էին վարում, բայց յետոյ, օրէնսդրական ճանապարհով նրանց ձեռքն անցաւ տեղական բոլոր գործերի վարչութիւնը, ի միջի այլոց զեմստուոյի պաշտօնեաներ նշանակելը, ինչպէս՝ ոստիկանական ծառայողներ աղքատանոցների խնամակալներ, ճանապարհների վերահսկուներ և այլն։

Հարկաւոր է միթէ ասել, որ այդպիսի պայմանների տակ ծխական զեմստուօն կորցրեց հիմնովին իր նշանակութիւնը, ով կը ցանկանար հարկեր վճարել, կոռ քաշել և մի և նոյն ժամանակ տեղական կարիքները քննելու գործին մասնակցել, չունենալով ամենաչնչին իրաւունքներով։

Անգլիական կոմսութիւնների մէջ, որ համապատասխանում էին մեր նահանգներին, բոլոր գործերը վարում էին կրկին հաշտարար դատաւորները։

Այդպիսով, անգլիական ինքնավարութիւնը մի քանի դար գոյութիւն ունենալուց յետոյ, ԺԸ դարի վերջը, ժողովրդի ձեռքից անցաւ խոշոր կալ-

ւածատէրների և նրանց միջից ընտրած հաշտարար դատաւորների ձեռքը։

Վերջիններս բոլոր տեղական հիմնարկութիւնների մէջ պաշտօնեաներ էին նշանակում, կազմում էին եկամուտների և ծախսերի էլ և մուտ, բաժանում էին ժողովրդի վրայ տուրքերը, հսկում էին բոլոր հողատիրական հարկերը հաւաքելու վրայ, քննում էին կալւածների դրութիւնը, վարում էին բանդերի և ճանապարհների շինութիւնների գործերը, քննադատում էին հողատիրական հարկերին վերաբերեալ գանգատները։

Տարին չորս անգամ, որոշած ժամանակ, բոլոր Անգլիայի կոմսութիւններում շերիֆների (նահանգապետների) նախագահութեամբ հաշտարար դատաւորները նիստ էին կազմում և վճռում էին բոլոր տեղական գործերը։

Այդ ժողովներին մասնակցում էին բացի հաշտարար դատաւորները և պաշտօնեաներ, ինչպէս՝ քննիչներ, բանդերի և աշխատաւորաց տների վերակացուներ, ոստիկաններ, երդեալ հաւատարմատարներ և այլն։ Սակայն նրանք ձայնի իրաւունքից զուրկ էին և միայն դատաւորներին հարկաւոր քաղաքներ և գանգատներ տեղեկութիւններ էին տալիս։ Իհարկէ, անգլիական ազգը չափազանց դժգոհ էր այդպիսի կարգերից։ Նա չէր մոռանում իր կորցրած ինքնավարական իրաւունքները և ամենուրեք գանգատներ էին լսւում, առանց ժողովրդի մասնակցութեանը կազմած, դատաւորների և կալւածատէրների վարչութեան դէմ։

Անգլիացիք յարմար վայրկեանի էին սպասում՝ թոթափելու իրանց վրայից հարուստների և մեծատուն կալւածատէրների իշխանութիւնը և այդպիսի վայրկեան հասաւ 1789 թուին։

Այդ միջոցին արդնեցաւ ֆրանսիական ազգը և իր արդնանալով թնդեց ամբողջ աշխարհը։ Նա թոթափեց իր սարկութեան շղթան, որով կապկապած էր ամբողջ դարեր և այդ աղատական կոչին արձագանք տուին բոլոր այն ազգերը, որոնց մէջ դեռ խեղդամահ չէր եղել մարդկային արժանաւորութիւնը։

Անգլիացիք, որպէս ֆրանսիացիների դրացիներ, առաջինները արձագանք տուին ֆրանսիական յեղափոխութեան։ Նրանք անշուշտ, ուժով կը ձեռք բերէին իրանց իրաւունքները, սակայն անգլիական աղնուականութիւնը այդ չթոյլ տուեց, տեսնելով ժողովրդական խմբերի լարած դրութիւնը, նա ինքը զինուորների դիմեց և զորանով առաջն առաւ այն սարսափելի պատերազմի, որ տեղի ունեցաւ Ֆրանսիայում։ Այդ զինուորները անում էին քայլ առ քայլ և Ֆրանսիական յեղափոխութիւնից միայն 45 տարի յետոյ, 1834 թուին, Անգլիայում տիրեց ընդարձակ ինքնավարութիւն։

Իսկապէս ասած, անգլիացիք իրանց երկրի մէջ ոչ մի նոր բան չմտցրին, և միայն վերադարձրին և ընդլայնացրին այն ինքնավարութիւնը, որ ունէին նրանք, իշխանութիւնը հաշտարար դատաւորների ձեռքը անցնելուց առաջ։

Գործը կրկին սկսւեց ծխական ժողովներից։

Սակայն ծխական ժողովները արդէն չէին համապատասխանում հասունացած պահանջներին,

այդ պատճառով նրանց իրաւունք տրւեցաւ, իրանց ընտրութիւնով, ամեն տեղ մի քանի ժողովների միասին խմբւել և կազմել առանձին ինքնավարական շրջաններ։

Այդ շրջաններում բոլոր հարկ վճարող ազգաբնակիչները, ներկայանում էին տեղական ինքնավարութեան ղեկավարներ, այնպէս, ինչպէս էին առաջ հաշտարար դատաւորները։

Միատեղ ժողովւած, նրանք ընտրում էին իրանց միջից մի քանի մարդ, որոնք և կատարում էին շրջանի ազգաբնակութեան ժողովների բոլոր կարգադրութիւնները։

Այդ մի քանի ընտրեալները փոքր ինչ լիշեցնում էին, ինչպէս կը տեսնենք ստորև, մեր զեմսկի ուպրաւները, մի և նոյն ժամանակ էլ նշանաւորապէս զանազանւում էին նրանցից։

Ամենից առաջ մեր զեմստւոլի ուպրաւների նախագահը և անդամները ռոճիկ են ստանում, իսկ անգլիականները՝ ձրի էին ծառայում։ Այնուհետև՝ անգլիական վարչութեան անդամները ամեն օր չէին ժողովւում, այլ որոշ ժամանակ՝ ամիսը կամ շաբաթը մի անդամ։

Այդ միջոցին նրանք քննում էին բոլոր գործերը և կայացնում էին վճիռներ, որոնց և գործադրում էին վարչութեան մէջ վարձով ծառայող պաշտօնեաները, ինչպէս՝ հաշւապահները, դանձապետները, հարկահանները, ճարտարապետները, ժողովրդական առողջապահութեան խնամակալները, ճանապարհների վերահասուները և այլն։

Այդպիսով անմիջապէս զեմստվոլի մշակներ

ներկայանում էին Անգլիայում վարձով՝ ծառայող անձինք։

Ինչ վերաբերում է հաշտարար դատաւորներին, նրանք անմիջապէս չմասնակցելով ինքնավարական գործերին, այնու ամենայնիւ շահւում էին նշանաւոր իրաւունքներով։

Այսպէս՝ հաշտարար դատաւորների ժողովը ներկայանում էր ամենաբարձր հիմնարկութիւն, որի մէջ քննում էին տեղական ինքնավարութեան գործերը։ Հաշտարար դատաւորներին և նրանց ժողովներին ստորադրւած էին այդ ինքնավարութեան բոլոր պաշտօնեաները։ Հաշտարար դատաւորները ըստ պաշտօնի համարւում էին վարչութեան և ոստիկանական հիմնարկութեան անդամներ. նրանք էին հաստատում վարչութեան կազմած ել ու մուրը և հարկերը, կառավարում էին բանդերը, ճանապարհների կամուրջները, գժանոցները։ Հաշտարար դատաւորութեան միջոցով հարուստ և անւանի ազնւականները և կալւածատէրները միանում էին շրջաններում ազգաբնակութեան հետ և ի միասին վարում էին որոշ շրջանի բոլոր գործերը։

Բարձրագոյն իշխանութիւնը բոլորովին չէր խառնւում տեղական ինքնավարութեան գործերի էութեանը։ Նա չէր մասնակցում՝ ոչ ինքնավարական ընտրութեանը, ոչ նրա կատարած ծախսերին և ոչ ինքնավարական ծառայութեանը հրաւիրւած պաշտօնեաների նշանակելու գործի մէջ, նա միայն վերահսկում էր ինքնավարական հիմնարկութիւնների մէջ օրէքները ճիշտ գործադրելու վրայ

և դրա համար ժամանակ առ ժամանակ քննիչներ էր ուղարկում։

Ինքնավարական հիմնարկութիւնների ապօրինի վճիռների դէմ բողոքում էին մինիստրները, սակայն դրա հանդէպը, տեղական ինքնավարութեան պաշտօնեաները իրաւունք ունէին մինիստրների գործողութեանց դէմ դանդատել պետական դաղարանին։

1888 թուականին հետեւեց նոր բարեփոխութիւն, նա աւելի ևս ընդարձակեց անգլիական ինքնավարութիւնը։

Ամբողջ Անդլիան բաժանուեցաւ 122 կոմսութեան, որոնք համապատասխանում էին մօտաւորապէս մեր նահանգներին։ Առաջուայ նման ամէն մի կոմսութեան մէջ իշխանութիւնը նշանակում է կառավարիչ մեր նահանգապետի նման։ Անգլիայում նա անուանւում է լորդ—փոխարքայ և բոլորովին չէ խառնւում տեղական գործերի մէջ, որ ամբողջովին դտնւում է ինքնավարութեան ձեռքում։

Իւրաքանչիւր կոմսութեան մէջ ազգաբնակութեան կողմից ընտրւում է վարչութեան նախագահ, որի պաշտօնը միացած է հաշտարար դատաւորի և վարչութեան անդամի պարտաւորութեանց հետ և այդ ինքնավարական վարչութիւնները վարում են ամբողջապէս բոլոր կոմսութեան գործերը՝ հարկերը, տուրքերը, հիւանդանոցները, բանդերը և առհասարակ ամէն տեսակ հիմնարկութիւնները։ Մինչև անդամ ոստիկանութիւնը ստորադրւած է ինքնավարութեանը, որովհետև 1888 թուականի բարեփոխութիւնով, ոստիկանութիւնը վարող հաշտարար

դատաւորների ժողովներում, մասնակցում էին ինքնավարութեան վարչութեան անդամները։

Բոլոր վերևը ասածից, մենք տեսնում ենք, որ Անդլիայում շատ հին ժամանակներից ազգաբնակութիւնը ինքն էր վարում իր գործերը և այդ երկրում ինքնավարութիւնը այնքան խոր արմատ է գցել ամբողջ ժողովրդի մարմնի և արեան մէջ, որ ոչ մի անգլիացի մինչև անդամ երևակայել չէ կարող, թէ կարելի է հեռացնել ազգաբնակութիւնը հասարակական գործերից և առանց նրա գիտութեան կարգադրել այն միջոցները որ նա տալիս է իր շրջանի կարիքների և շահերի համար։

«Մի անդամ ինձանից հարկեր են առնում», դատում է անդլիացին,» և ես պարտաւորութիւններ եմ կատարում, ուրեմն ես պէտք է անպատճառ դիտնամ, թէ ուր են գնում իմ արիւն քրտինքով վաստակած փողերը և թէ իրաւի իսկական կարիքների համար է գործադրում իմ աշխատանքը։ Այդ գործը, բացի ինձանից և իմ ընտրած մարդկանցից՝ ոչ ոքի չեմ կարող հաւատալ, առաւել ևս նշանակւած աստիճանաւորներին, որոնք մինչև անդամ, եթէ բարեխիղճ էլ լինին, որ հազիւ է պատահում, ոչ մի հնար չունին ներշնչել մի յայտնի տեղի շահերով»։

Անդլիացիք ժողովրդական ազատութիւնը մարդու բնածին իրաւունքն են համարում։ Նրանց ինքնավարութիւնը խստիւ պաշտպանւում է օրէնքներով և ոչ մի իշխանութիւն չէ կարող այդ օրէնքները քանդել, որովհետև իւրաքանչիւր անդ-

լիացի, որքան էլ նա չքաւոր լինի, կարող է հաստատապէս պաշտպանել իր շահերը։

Անգլիական ազգի ընտրովի ներկայացուցիչները մասնակցում են պետութեան կառավարչական գործին և ամէն ժամանակ կարող են պատասխանատուութեան ենթարկել ամեն մի մինիստրի, որը համարձակուէր դարերով սրբազործուած անգլիացիների իրաւունքները քանդել։

Մեր բոլոր ասածի հիման վրայ՝ մենք, առաջքան թէ խօսել ռուսական զեմստվոյի մասին, հարկաւոր համարեցինք ծանօթացնել ընթերցողներին անգլիական նոյնանման հիմնարկութիւնների հետ։

Ռուսական ազգի վիճակը ոչ մի առնչութիւն չունի անգլիականի հետ։ Ռուսական ազգը իր ամբողջ կեանքում երբէք չէ շահուել այնպիսի ազատութիւնով, որպիսով անգլիացիները։

Հեռու ժամանակները Ռուսիան կազմուած էր բազմաթիւ իշխանութիւններից։ Այդ շրջանում երկրի մէջ կային ժողովրդական ինքնավարութեան մի քանի նշաններ։ Նա արտայայտուում էր ժողովրդական «վեչե» (ժողով) և «իշխանական» խորհուրդների ձեւով։

Այդ ժողովներում քննում էին նոր իշխան ընտրելու կամ հնին աքսորելու վերաբերեալ հարցեր, բայց երբեմն էլ քննում էին դատական և օրէնսդրական գործեր։ Ժողովրդական վեչեն հասել էր ամենածաղկեալ դրութեան՝ Նովգորոդի, Պսկովի և Սմոլենսկի իշխանութիւնների մէջ, Պսկովը, Նովգորոդը և Սմոլենսկը մօտ առևտրական կապեր ունէին Եւրոպայի հետ, և այդ պատճառով այստեղ

կազմուեցաւ ազդեցիկ առևտրական դասակարգ, որ միջոց ունէր պաշտպանելու իր իրաւունքները։ Այս իսկ իշխանութիւնների մէջ և վեչեն աւելի երկարատև գոյութիւն ունեցաւ, որովհետև նրանք չենթարկուեցան թաթարների արշաւանքին, որ, գուցէ, ռուսական ինքնավարութեան կորստի պատճառներից մէկն էր։

Բայց վեչեն, ինչպէս մենք ասացինք արդէն, գոյութիւն ունէին իշխանական խորհուրդներ։ Այդ խորհուրդներում նիստ ունէին բոյարները (ազնուականները) և առհասարակ հարուստ և զօրեղ մարդիկ, որոնց օգնութեանը կարօտ էին իշխանները և առանց որոնց խորհրդին, իշխանը չէր վստահանում որ և է վճռական գործ գլուխ բերել։

Այսպիսով իշխանական խորհուրդները կազմուած էին նշանաւոր, մեծատուն անձերից, իսկ վեչեն համաժողովրդական էր։

Իշխանը ներկայանում էր մի կերպ խորհրդի և վեչեի կամքը կատարող։

Նրա վրայ էր դրուած, դատավարութիւնը, հարկեր հաւաքելը, երկիրը թշնամու դէմ պաշտպանելու գործը, երբ նա ներկայանում էր, որպէս սպարապետ։

Իշխանի անմիջական օգնականներ՝ էին, այդ պարտաւորութիւնները կատարելու միջոցին, դրուժիններկները (զինուորականները) և նոյնպէս բոյարները, որոնցից ապագայում առաջ եկաւ ռուսական ազնուականութիւնը։

Ամբողջ մեր նկարագրած շրջանը անուանում է իշխանական։ Նա գոյութիւն ունեցաւ մինչև այն

ժամանակ, երբ բոլոր իշխանութիւնները կորցրին իրանց անկախ գոյութիւնը և ձուլեցին մի մոսկալի տէրութեան մէջ, մի.և նոյն ժամանակ մոսկալի իշխանը դարձաւ ցար։

Այդ ժամանակից արդէն սկսւում է մոսկովական կամ ցարական շրջան։

Մենք չենք մանրամասնօրէն նկարագրելու մոսկովական շրջանի ամբողջ կազմակերպութիւնը, այլ կը լիշենք միայն այդ միջոցին գոյութիւն ունեցող ինքնավարական գործօնները։

Վեչէի դերը մոսկովական թագաւորութեան մէջ կատարում էր զեմսկիյ սոբորը (հողատիրական ժողովը), իսկ իշխանական խորհրդի տեղ ծագեցաւ բոյարական խորհուրդ (боярская дума)։

Սակայն այդ հիմնարկութիւնները սաստիկ զանազանւում էին, իշխանական շրջանում գոյութիւն ունեցող, իրանց նախորդներից։

Այն ինչ վեչէի մէջ մասնակցում էր բոլոր ազատ ազգաբնակութիւնը, զեմսկիյ սաբորի կազմի մէջ մտնում էին իշխանութիւնից հրաւիրուած անձինք՝ հոգևորականութիւնից, աստիճանաւորներից և աղնւականութիւնից։ Եւ զեմսկիյ սաբորի այդ անդամներն էլ վճռական ձայն չունէին, այլ միայն խորհրդատու ձայն. նրանք լայտնում էին իրանց կարծիքը, բայց իշխանութիւնից էր կախւած՝ համաձայնել, թէ ոչ զեմսկիյ սաբորի հետ։

Միմիայն 1598 թուականից զեմսկիյ սաբորը դարձաւ մի կերպ ընտրողական հիմնարկութիւն, բայց ոչ երկարատև. իշխանութեան կամքով հիմնւած լինելով, նա նրա ձեռքով էլ քանդւեց։

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A Publiczna Biblioteka
7/XI 1922
ՄՈՍԿՎԱ, MOSCOW
ՄԱՍԱՐԻՀԱՅԻՆ ՄԱՍ
1003
114780

Եւ եթէ զեմսկիյ սաբորը ոչ էր ներկայացնում ժողովրդական կարիքների [illegible] ևս այդ նշանակութիւնը չունէր [illegible] խորհուրդը։

Դա բոլորից, առաջ արիստոքրատիքական, աղնւապետական հիմնարկութիւն էր, խորհրդի մէջ մասնակցում էին միայն բոյարների շրջանի բարձր աստիճանաւորներ։ Այնուհետև, բոյարական խորհուրդը միայն խորհրդատու հիմնարկութիւն էր թագաւորի կողքին և ինքնուրոյն նշանակութիւն չունէր։ Նրա մէջ բոլոր հարցերը քննւում էին թագաւորի հրամանով կամ նրա ծրագրով։

Պետրոս մեծի գահակալութիւնից սկսած, ամբողջ իշխանութիւնը կէտրոնանում է միայն թագաւորի ձեռքում։ Այդ ժամանակից և մինչև 1864 թուականը այսինքն, 175 տարուայ ընթացքում, Ռուսիայում արդէն գոյութիւն չունէր ճիշտ՝ ոչ մի նշան մինչև անգամ այնպիսի չնչին ներկայացչութեան, որպիսին էին զեմսկիյ սաբորը և բոյարական խորհուրդը։

Կեղեքւած ժողովուրդը, զուրկ ամեն կերպ մարդկային իրաւունքներից, կրում էր բոլոր ծանրութիւնները, ոչ մի միջոց չունենալով ցոյց տալ իր կարիքները, պաշտպանել իրան իշխանաւորների և կալւածատէրերի սարսափելի կամայականութիւնից, իսկ բարձր դասակարգերը, իրանց կողմից, ներկայացնում էին ամբողջովին ստորադրւած ցարին, ծառայող դասակարգ։

Կատարինէ եկրորդի թագաւորութեան առաջին տարին, 1762 թուին, աղնւականութիւնը ազատւած

պարտաւորական զինուորական ծառայութիւնից, դարձաւ հասարակ պաշտօնավար դասակարգից՝ մարդկանց արտօնեալ դասակարգ։

Այն միջոցին լուրեր էին շրջում, թէ ժողովուրդը ազատելու է կալւածատէրերի ձեռքից, սակայն նա մնաց ստրկութեան մէջ դեռ 100 տարի էլ։

Միայն 1861 թւին, Աղէքսանդր երկրորդի թագաւորութեան ժամանակ փուլ եկաւ վերջապէս ստրկական շրջանը։ Այդ ազատութեան լոգիքական հետևանքն էր՝ ռուսական զեմստվօն կամ ինքնավարութիւնը, որի հետ մենք հիմա ծանօթանալու ենք։

Ինքնավարական հիմնարկութիւնների միտքը ծնեցաւ միաժամանակ գիւղականների ազատութեան ծրագրի հետ։ Ստրկական ժամանակաշրջանը սպանում էր ժողովրդի բոլոր կենսական ուժերը և նրան այդ դրութեան մէջ աւելի ևս մնալը տէրութեանը կորուստ էր սպառնում։ Ատիճանաւորութիւնը կառավարում էր երկիրը առանց հակողութեան, անհնարին ասիճանի չարագործելով իր իշխանութիւնը։

«Ամբողջ ժողովրդի կեանքը խնամակալութեան տակ է դրած», գրում էր այն ժամանակուայ գործունեաներից մէկը։

Չկայ ոչ մի մանր բան, որ անպայման հաւատացած լինէին ժողովրդին։ Ամեն ինչ կատարւում է բարձրագոյն իշխանաւորների թոյլատրութիւնով։ Ժողովուրդը չէ համարձակւում միախումբ միջոցներով վարձել մի սալլ կոռի, կամ մի խրճիթ բնակարանի հարկ լրացնելու համար, նա չէ կարող չի-

նել մի չնչին կամուրջ, մինչև անգամ իրաւունք չունի գրագիտութեան համար հասարակութեան ուսուցիչ վարձել։ Կառավարութեան գործերը, նրանց անթիւ բազմութեան պատճառով, ներկայանում էին ամենուրեք, բոլոր գործադիր հիմնարկութիւններում, անգրագիտ հակերի չափով, նրանց քննելու համար պէտք էին տասնաւոր, մինչև անգամ հարիւրաւոր պաշտօնեաներ... Այդ բանը այնտեղ հասաւ, որ վարչութեան գործերը բոլորովին այն անձանց ձեռքը չէին, որոնց հաւատացած էին։ Այդ գործերից մեծ մասը պարտաւորապէս պէտք է անցնէին իշխանաւորներից դիւանատան ծառայողների ձեռքը՝ նրանք միջոց էին ստանում՝ սպանել և ողորմալ ստորագրեալներին և ուրիշների քամակում թաքնուած, գործում էին առանց որ և է պատասխանատուութեան... Բնական է, որ գործադիր հիմնարկութիւնները լքւում էին մեծ մասամբ այնպիսի անձինքներով, որոնք ձեռք էին վեր առել իրանց մարդկային արժանաւորութիւնից և որոնք տէրութեան մէջ պաշտօնավարութիւնը ամենաամօթալի արհեստ էին դարձրել»։

Բայց ահա ինչ էր գրում 1855թ. կոմս Պ. Ա. Վալուեվը, որ 1861 թւին նշանակւեց ներքին գործերի մինիստր։

«Արդեօք բարենպաստ է Ռուսիայի հոգեկան և իրապէս նիւթական ուժերի զարգացման համար մեր տէրութեան կառավարչական զանազան մասերի այժման կազմակերպութիւնը», հարցնում է հեղինակը և պատասխանում է. «նրա բնորոշ գծերը բովանդակում են ճշմարտութեան բացակայութիւն

ամենուրեք, տէրութեան երկմտութիւն իր սեփական գործոնների դէմ և արհամարանք դէպի ամեն ինչ։ Զների անագին թիւը ճնշում է կառավարական գործունէութեան էութիւնը և ապահովում է ընդհանուր պաշտօնական ստութիւն»։

Այդպէս էր Ռուսիայի կազմակերպութիւնը մինչև նրա բարեփոխութիւնը և զարմանալու բան չէ, որ ինչպէս մենք ասել ենք արդէն, հողատնտեսական հիմնարկութիւնների գաղափարը ծնեցաւ միաժամանակ գիւղականների ազատութեան ծրագրի հետ։

Արդէն 1859 թ. մարտի 25-ի Բարձրագոյն հրամանի մէջ, ի միջի այլոց ցոյց է տւած, որ «գործադիր և քննչական բաժինները կազմակերպելիս, պէտք է քննադատել գաւառի տնտեսութիւնը կարգաւորող վարչութիւնը, մի և նոյն ժամանակ քննադատել՝ գաւառի տնտեսական վարչութեանը աւելի ամփոփութիւն, աւելի ինքնիշխանութիւն եւ աւելի հաւատ ընծայութեան անհրաժեշտութիւնը։» 1862 թ. մինիստրական խորհրդում ներկայացրած էր Բարձրագոյն հաւանութեամբ ինքնավարական հիմնարկութիւնների կանոնադրութիւնը, նա այնուհետև ներկայացրած և քննւած էր նոյն մինիստրական խորհրդի առանձին խորհրդական ժողովում։ 1864 թ. յունուարի 1-ին վերջնականապէս մշակւած ծրագրները ներժուծած էին արքունական խորհրդի ընդհանուր ժողովը և այդ օրը զեմստւոյի հիմնարկութիւնների կանոնադրութիւնը ստացաւ օրէնքի զօրութիւն, մի և նոյն ժամանակ Բարձրագոյնս հրամայւած էր մտցնել նրան Եւրոպական Ռուսիայի 33 նահանգներում։

Կանոնադրութեան գործադրութիւնը սկսւեց 1865 թւականից և 1876 թւին զեմստւոյի հիմնարկութիւնները մտցրած էին 34 նահանգում և Դոնի Զօրքի վիճակում, ուր 1882 թ. նա դատարեցրած էր։

Առաջին, 1864 թ. հողատիրական կանոնադրութեան մէջ ասւած էր, որ զեմստւոյի հիմնարկութիւնները կազմակերպւում են՝ իւրաքանչիւր նահանգի եւ իւրաքանչիւր գաւառի տեղական տնտեսական շահերին եւ կարիքներին վերաբերեալ գործերը վարելու համար։

Զեմստւոյի վարչութեանը ենթակայ գործերը սրանք էին՝ 1) զեմստվոյի ունելիքի, դրամագլուխների և դրամական հարկերի վարչութիւնը, 2) զեմստվոյի բնակարանների և այլ շինութիւնների և հաղորդակցութեան ճանապարհների շինութիւնը, 3) ժողովրդական սնունդը ապահովելու միջոցները, 4) զեմստւոյի բարեգործական հիմնարկութիւնների և այլ խնամակալութիւնների վարչութիւնը, ազքատութիւնը վերջացնելու միջոցներ, 5) ապահովագրութիւնը զեմստւոյի կալւածների, 6) տեղական առևտուրը և արհեստագործութիւնը ծաղկեցնելու հոգացողութիւնը, 7) ժողովրդական լուսաւորութեան, ժողովրդական առողջապահութեան և բանդերի հոգատարութեան մէջ մասնակցելը, 8) օժանդակել անանոց կոտորածի առաջն առնելու, նոյնպէս և պաշտպանել դաշտերը մարգագետինները, անտառները և պարտէզները մորեխից, մկներից և այլ վնասաբեր միջատներից և կենդանիներից, 9) զեմստւոյի վրայ դրած զինուորական և քաղաքական վարչութեան կարիքների կատարումը և փոստին վերաբերեալ հարկերի գործերին մասնակ-

ցելը, 10) բաժանել ժողովրդի վրայ այն պետական դրամական հարկերը, որոնց բաժանումը նահանգում և գաւառներում դրում են զեմստվոյի հիմնարկութիւնների վրայ, 11) նշանակել, բաժանել, հանել և ծախսել տեղական տուրքերը նահանգում և գաւառներում զեմստվոյի հիմնարկութիւնների կարիքները լրացնելու համար, 12) ներկայացնել կառավարութեանը տեղեկութիւններ և եզրակացութիւններ նահանգի կամ գաւառի տեղական տնտեսական չահերի և կարիքների վերաբերմամբ և այդ առարկաներին վերաբերեալ միջամտութիւններ անել, կառավարութեան հասցնել նրա առաջարկի համաձայն տեղեկութիւններ՝ զեմստվոյի տնտեսութեանը վերաբերեալ և վերջապէս, 13) ընտրութիւններ կատարել անդամների և այլ զեմստվոյի հիմնարկութեանց պաշտօնեաների և միջոցներ յատկացնել այդ հիմնարկութիւնները պահպանելու համար։

Զեմստվոյի հիմնարկութիւնները բաժանւում են գաւառականների եւ նահանգականների։

Գաւառական զեմստվոյի հիմնարկութիւններ են անւանւում զեմստվոյի ժողովները եւ գաւառական զեմստվոյի վարչութիւնները։

Գաւառական հողատիրական ժողովները կազմւում էին ժողովրդից ընտրած ձայնաւորներից։

Գաւառական ձայնաւորների ընտրութիւնները կատարւում էին՝ 1) գաւառական կալւածատէրերի, 2) քաղաքացի ընտրողների, եւ 3) գիւղական համայնքներից ընտրեալների ժողովում։

Գաւառական կալւածատէրերի ընտրողական ժողովում

իրաւունք ունէին մասնակցելու բոլոր այն անձինք, որ ունէին յայտնի ցենզ, այսինքն, հողեր, տներ, տնտեսական գործարաններ կամ այլ սեփականութիւն։ Հողաբաժինների դեսիատինի քանակութիւնը որոշւած էր իւրաքանչիւր գաւառի համար առանձին։

Ինչ վերաբերում է, բացի գետինը, այլ գաւառական ունելիքների կալւածատէրերի ժողովներին մասնակցելուն, նրա արժողութիւնը պէտք է լինէր ոչ պակաս 15,000ը, կամ նա ունենար տարեկան արևտրաշրջան ոչ պակաս 6000ը։ սրանից երևում է, որ գաւառական կալւածատէրերի ժողովին կարող էին մասնակցել միայն հարուստ մարդիկ՝ կալւածատէրերից, վաճառականներից, գործարանատէրերից և գիւղականներից, նրանք, որոնք անձնական սեփականութեան իրաւունքով, տիրում էին մեծ տարածութեան հողեր, բացի առանձին կալւածատէրերը, կարող էին յանձին իրանց ընտրեալի ժողովներին մասնակցել՝ առևտրական, կրթական և այլ ընկերութիւններ, որոնք ունէին որոշ քանակութեան ունելիք, նոյնպէս և հաւատարմատարներ եկեղեցական պաշտօնեաներից, եթէ եկեղեցական հողերի քանակութիւնը հաւասար էր այդ գաւառի համար նշանակւած օրինական ցենզին։

Այսպիսով, գաւառական հողատիրական ժողովներին կարող էին մասնակցել այնքան ներկայացուցիչներ, որքան գաւառում ցենզ կար անձնական սեփականութեան իրաւունքով։

Թոյլ տանք, թէ մի յայտնի գաւառում հինգ հարիւր հազար դեսեատին հող կայ և այդ հաշւում

երեք հարիւր հազար դեսեատին ժողովրդապատկան գիւղական հող։ Ուրեմն գաւառական կալւածատէրերի ժողովում կարող էին մասնակցել այն անձինք, որոնց պատկանում էր երկու հարիւր հազար դեսեատին հող։

Եթէ այդ գաւառի ցենզը որոշւում էր, ասենք, 200 դեսեատին, ուրեմն գաւառական կալւածատէրերի ընտրողական ժողովում կարող էին մասնակցել 1000 հոգի։

Ձայնաւորներ ընտրելու համար գաւառական կալւածատէրերի ժողովները կամ մի ընդհանուր ժողով էին կազմում գաւառական քաղաքում և կամ ժողովում էին մաս մաս միախումբ գիւղերի մի վիճակում։ Ժողովների էր կոչում և նրանց նախագահում էր գաւառական ազնուականների աւագը։ Ժողովելուց յետոյ կանխապէս խորհրդակցում էին և ընտրութիւններ էին, կատարում այսինքն. քարերով, ընտրում էին զեմստւոյի ժողովի ձայնաւորներ։ Նրանք, որոնք ստանում էին աւելի ընտրողական, քան թէ չընտրողական քարեր նշանակւում էին ձայնաւորներ մինչև որ լրանում էր որոշ գաւառի համար կալւածատէրերից նշանակած ձայնաւորների թիւը։ Մի քանի գաւառներում նրանց թիւը նշանակած էր երկուսից ոչ աւելի, միւսներում մինչև քառասուն։

Այդպէս էր անցնում գործը խոշոր կալւածատէրերի գաւառական ժողովներում։

Գիւղական համայնքների ընտրողական ժողովներում մասնակցում էին այն ընտրողները, որոնք նշանակւում էին վիճակների ժողովներից։ Այդ ընտրողնե-

րի թիւը, վիճակի ժողովներում մասնակցելու իրաւունք ունեցող տնտրների ընդհանուր թւի $^1/_3$ մասից աւելի չպէտք է լինէր և այն պայմանով, որ վիճակի իւրաքանչիւր գիւղից, գոնէա, մի ներկայացուցիչ գտնւի։

Գիւղականաց ժողովները նշանակում էին նահանգական վարչութեան (губернское правленіе) կարգադրութիւնով վիճակի քանի մի վայրերում, հաշտարար միջնորդների բնակավայրում կամ գիւղաքաղաքներում։ Այդ ժողովները բաց էին անում հաշտարար միջնորդները, իսկ յետոյ հաշտարար դատաւորները, երբ այդ պաշտօնը հիմնուեց։ Ժողովը բաց անելուց յետոյ հաշտարար միջնորդը առաջարկում էր նախագահ ընտրել և հաստատում էր նրան, այնուհետև ժողովը զբաղւում էր ընտրութիւններով, արդէն իր նախագահի ղեկավարութիւնով, իսկ հաշտարար միջնորդը բացատրում էր տարակուսութիւնները, եթէ այդպիսիները ծագում էին։

Գիւղականաց ժողովներում ընտրութիւնները նոյն կերպ էին կատարւում, ինչպէս և կալւածատէրերի գաւառական ժողովներում, այսինքն. սկիզբը մատնացոյց էին լինում, թէ ում են ցանկանում ընտրել և յետոյ ընտրութիւն էին կատարում քարերով։

Ինչ վերաբերում է գիւղականներից ընտրած ձայնաւորների թւին, նա նոյնպէս զանազան էր լինում զանազան գաւառներում. մի տեղ ընտրում էր չորսից ոչ աւելի, իսկ միւս գաւառներում թիւը հասնում էր քառասունի։

Վերջապէս, քաղաքներից ընտրում էին ձայ-

նաւորներ քաղաքային ընտրողական ժողովներում։ Այդ ժողովներում իրաւունք ունէին մասնակցելու՝ 1) առևտրական վկայականներ ունեցողները 2) արհեստանոցների, գործարանների և այլ առևտրական և արհեստագիտական հիմնարկութիւնների տէրերը, որոնց տարեկան առևտրական գրամագլխի չրջանառութիւնը 6000 ր. պակաս չէր, 3) այն անձինք, որ ունէին քաղաքի հողի վրայ անշարժ կալք 500 ր. տուրքով՝ փոքր և 3000 ր. տուրքով՝ մեծ քաղաքներում և 4) մասնաւոր կալուածատէրերի, զանազան հիմնարկութիւնների և ընկերութիւնների հաւատարմատարներ և այլն։

Քաղաքային ժողովներում նախագահում էին քաղաքագլուխները։

Ընտրութիւնները կատարւում էին նոյն կարգով, ինչ կարգով կալուածատէրերի և գիւղականների ժողովներում։

Ուրեմն գաւառական զեմսկիյ ժողովները կազմւում էին. 1) կալուածատէրերից, 2) գիւղականներից և 3) քաղաքներից։

Մենք տեսանք արդէն, որ ձայնաւորների թիւը ամեն մի ժողովից, ժողովները առանձին առանձին առած, զանազան էր գաւառներում, այդ պատճառով, ի հարկէ, գաւառական ժողովում էլ ձայնաւորների ընդհանուր թիւը նոյնպէս միատեսակ չէր։ Կային գաւառներ, ուր ձայնաւորների թիւը կալուածատէրերից, գիւղականներից և քաղաքացիներից 10 հոգուց աւելի չէր լինում, իսկ կային և այնպիսի գաւառներ, ուր նրանց թիւը հասնում էր մինչև 96 հոգու։ Այդ կախած էր նրանից, թէ

ինչպէս էին բաժանուած գաւառում անշարժ կալքերը և ուրեմն այդ կալքերի ներկայացուցիչները։

Եթէ ժողովներում ընտրողների թիւը աւելի փոքր էր, քան թէ որքան մարդ ընտրելու էր այն ժամանակ բոլոր ներկայացուցիչները ընդունւում էին զեմսկի ժողովի ձայնաւորներ առանց ընտրութեան։

Ժողովներում ընտրութիւնների մէջ մասնակցելու իրաւունքից՝ զուրկ էին, 1) 25 տարեկան հասակից փոքրները 2) նրանք, որոնք դատի էին ենթարկւած և չէին արդարացած, 3) պաշտօնից աքսորւածները, 4) դատի և քննութեան տակ գտնւողները, 5) սնանկ ճանաչւածները 6) հոգևորական դասից արտաքսւածները, նոյնպէս չէին կարող ընտրած լինել, որպէս ձայնաւորներ՝ նահանգապետները և փոխ-նահանգապետները, նահանգական վարչութեան անդամները, նահանգական և գաւառական դատախազները և ոստիկանութեան մէջ ծառայողները։

Ձայնաւորները ընտրւում էին երեք տարով։ Զեմստվոյի ժողովներից զուրս նրանք չէին շահւում ոչ մի արտօնութիւնով և ոճիկ չէին ստանում։

Տարին մի անգամ նահանգապետի թոյլտուութիւնով ընտրած ձայնաւորները հաւաքւում էին գաւառական քաղաքը հերթական գաւառական զեմստվոյի ժողովի։ Վերջինս կարող էր բացել, եթէ միայն ներկայ էին գաւառի ձայնաւորների թիւի մի երրորդ մասը և ամենայն դէպս տասը հոգուց ոչ պակաս։

Բացի ընտրած ծայնաւորներից գաւառական զեմստվոյի ժողովի կազմի մէջ մնում էին պետական կալուածների և արքունական ընտանիքի կալուածների վարչութեան ներկայացուցիչները, եթէ գաւառի մէջ կային պետական կամ արքունական ընտանիքի կալուածները։

Հերթական գաւառական զեմստվոյի ժողովը ընտրում էր իր միջից գաւառական զեմստվոյի վարչութիւն և նահանգականի ձայնաւորներ։

Գաւառական վարչութիւնը կազմում էր նախագահից և երկու անդամից, երեք տարով ընտրուած։

Վարչութեան նախագային հաստատում էր նահանգապետը։ Թէ վարչութեան նախագահը և թէ անդամները ռոճիկ էին ստանում, որի քանակութիւնը որոշում էր զեմստվոյի ժողովը։

Գաւառական զեմստվոյի վարչութիւնը կատարում էր այն վճիռները, որ կայացնում էր գաւառական զեմստվոյի ժողովը։

Բացի հերթական ժողովները, լինում էին յանկարծական կամ արտաքոյ կարգի, որոնք նշանակում էին նշանաւոր դէպքերում։ Արտաքոյ կարգի ժողովներ կազմելու համար պահանջում էր ներքին գործոց մինիստրի թոյլտուութիւնը։

Գաւառական զեմստվոյի ժողովները և վարչութիւնները վարում էին գաւառին վերաբերեալ գործերը։

Բացի այդ նրանց վարչութեանը ներքարկուած էին առանձնապէս, 1) գաւառի մէջ բաժանել այն պետական և նահանգական տուրքերը, որոնց գաւառում բաժանելու պարտաւորութիւնը դրած էր զեմստվոյի հիմնարկութիւնների վրայ, 2) կանխապէս որոշել՝ ընդհանուր—նահանգական հարկերը, որ գաւառի բաժնին էր ընկնում և նրանց հաւաքելու եղանակը, այդ տեղեկութիւնները հաղորդում էին նահանգական վարչութեանը, 3) տեղեկութիւններ և եղրակացութիւններ տալ նահանգական զեմստվոյին գաւառի տնտեսութեան մասին, 4) վճիռ տալ՝ բանալու, տեղափոխելու մի տեղից միւս տեղ և փոփոխելու աճուրդների, առևտրատեղերի և առևտրահանդէսների, ժամանակը 5) չինել և վարել ճանապարհները և կառավարել և հսկել, նահանգական վարչութեան ցուցմունքով, ընդհանուր նահանգի ճանապարհի այն մասի վրայ, որ անցնում էր գաւառի միջով։

Նահանգական ժողովը կազմում էր նահանգական ձայնաւորներից, որոնց, ինչպէս մենք արդէն ասացինք, ընտրում էին իրանց միջից գաւառական զեմստվոյի ժողովները երեք տարի ժամանակով։ Նահանգական ձայնաւորների թիւը իւրաքանչիւր գաւառից որոշում էր գաւառի զեմստվոյի ժողովի ձայնաւորների թիւին համաձայն և այդ պատճառով զանազան նահանգներում նա հաւասար թիւ չէր կազմում։ Օրինակ. այն միջոցին, երբ Օլոնեցկի նահանգի նահանգական ձայնաւորների թիւը ընդ ամենը 15 էր, Տամբովի և Պոլտաւի նահանգներում նրանց թիւը մինչև 100-ի էր հասնում։

Նահանգական զեմստվոյի ձայնաւորները տարին մի անգամ ժողովւում էին նահանգական քաղաքներում հերթական նահանգական զեմստվոյի ժողով-

ների, որ կազմում էր աղնւականութեան նահանգական աւագի նախագահութիւնով։

Հերթական ժողովում ընտրւում էր երեք տարով նահանգական վարչութիւն, նա կազմւած էր նախագահից և վարչութեան անդամներից, նրանց թիւը պէտք է լինէր, երկուսից ոչ պակաս և վեցից ոչ աւելի։ Նահանգական վարչութեան նախագահին հաստատում էր ներքին գործոց մինիստրը։

Նախագահին, վարչութեան անդամներին ռոճիկ նշանակելը կախւած էր նահանգական զեմստվոյի ժողովից։

Նահանգական վարչութիւնը կատարում էր նահանգական զեմստվոյի ժողովի վճիռները և վերջինի ղեկավարութիւնով, կառավարում էր զեմստվոյի ունեցւածքը Նա նոյնպէս նախապատրաստում էր ամեն ինչ, որ պէտք էր զեմստվոյի ժողովի համար, կազմում էր եղ և մուտք և հաշիւներ, հետեւում էր եկամուտները հաւաքելուն, ծախսում էր զեմստվոյի գումարները, պաշտպանում էր զեմստվոյի բոլոր գործերը դատական հիմնարկութիւնների մէջ և քննում էր գաւառական զեմստվոների գանգատները։

Բացի վարչութիւնը, նահանգական ժողովը կարող էր ընտրել իր միջից ճանաւորներ զեմստվոյի զանազան ունեցւածքները կառավարելու համար։

Բացի հերթական ժողովները, նշանաւոր դէպքերում կարող էին նշանակւել, ներքին գործոց մինիստրի թոյլտւութիւնով, և արտաքոյ կարգի նահանգական ժողովներ։

Նահանգական զեմստվոյի ժողովներին ա-

ռանձնապէս վերաբերում էին՝ 1) քննել և հաստատել նահանգական զեմստվոյի եղ և մուտքը և բաժանել դրամական և անձնական հարկերը, 2) թոյլտւութիւն տալ՝ դնելու և վճառելու նահանգական զեմեստվոյին անշարժ կալքեր, 3) վարել նահանգական զեմեստվոյի դրամագլուխները, 4) կազմել նոր դրամագլուխներ նահանգական զեմստվոյի կարիքները լրացնելու համար, 5) փոխառութեան թոյլտւութիւն տալ նահանգում զեմստվոյի նահանգական կարիքները լրացնելու համար և ժամանակաւոր փոխառութիւն անել զեմստվոյի դրամագլուխներից, 6) դասել գիւղական ճանապարհները նահանգական ճանապարհների կարգին և հակառակը՝ նահանգականը գիւղականի և փոխել ճանապարհների ուղղութիւնը, 7) սահմանել նոր տուրքեր նահանգական զեմստվոյի կարիքների համար, 8) նշանակել տուրքեր անցորդներից նահանգական զեմստվոյի ճանապարհներով, կամուրճներով և հուներով, անցնելիս 9) տեղական արդիւնաբերութիւնների ցուցահանդէսներ կազմել, 10) իշխանութեանը ներկայացնելիք եզրակացութիւնների և տեղեկութիւնների քննադատութիւնը, իշխանութեան առաջարկութիւնով կամ վարչութեան և ժողովի անդամների միջամտութիւնով, 11) ներկայացնել իշխանութեան թոյլտւութեանը նախագիծ՝ հիմնելու նահանգական զեմստվոյի դրամատներ, նոյնպէս և եզրակացութիւններ տեղական առևտրի, երկրագործութեան և արհեստագիտութեան վերաբերմամբ, եթէ գործադրելիք միջոցները զեմստվոյին յատկացրած իրաւունքներից դուրս է, 12) լանձնարարութիւններ տալ նահանգական

վարչութեանը և վճիռներ, ծագած տարակուսութիւնների և առանձնապէս նշանաւոր հարցերի վերաբերմամբ, 13) քննել դանդատներ նահանգական զեմստվոյի վարչութիւնների վրայ, 14) զեմստվոյի տնտեսութեան վերաբերեալ հաշիւները հաստատել, 15) հաստատել տուրքեր՝ մկներ կամ ուրիշ վնասակար կենդանիներ ոչնչացնելու համար։

Նահանգական զեզստվոյի ժողովները, բացի այդ կարող էին հրատարակել նահանգի համար պարտաւորական կարգադրութիւններ։

Նրանք կարող էին թոյլատրութիւն տալ վարչութեանը՝ նշանաւոր դէպքերում եղ և մոլց չեղ-ել և ժամանակաւոր փոփոխութիւններ անել։

Էական գծերով այս էր առաջին 1864 թ. կանոնադրութիւնը։

Նա տնքում է այն պակասութիւններից, որ միշտ բնորոշ են ամեն կերպ նախագծերի, որ մշակուած են աստիճանաւորների ձեռքով, առանց հասարակական ուժերի մասնակցութեանը։

«Թէպէտ նորամուծութիւնը բղխած էր առաջուան ժողովրդական տնտեսութեան դիւանական կարգի անբաւարարութիւնից, ասած էր մի ամսադրի մէջ 1864 թ. կանոնադրութեան վերաբերմամբ, «սակայն, նորամուծութեան գործադրութիւնը հարկաւորաւ լանձնել կրկին նոյն դիւանական կարգին և անհմուտ ճանաչուած ձեռքերով հիմնել այն, որ նրան պէտք է փոխարինէր»

Ցայտնի գրող Ի. Ս. Ակսակովը իր «День» լրագրի մէջ զարմանք էր յայտնում, որ իշխանութիւնը գործում էր «հասարակական օգնութիւնից

դուրս, առանց կեանքի օրգանիքական ստեղծագործութեան։»

Եւ ահա չնորհիւ այն փաստի, որ զեմստվոյի հիմնարկութիւնները աստիճանաւորների գործ էր, շատ շուտով մերկացան նրա պակասութիւնները։

Չնայելով զեմստվոյի գործունեաների եռանդին, նրանց իրաւական դրութիւնը շատ չնչին էր, իսկ ադմինիստրացիայի ճնշումը և իշխանութիւնը այնքան զօրեղ, որ ամենայն աշխատութիւնով հասնում էին, համեմատաբար, չնչին արդիւնքների։

Զեմստվոյի ներկայացուցիչները բարձրաձայն յայտնում էին այդ բանը զեմստվոյի ժողովներում և նրանց հետ համաձայն էին, թէ մամուլի ամենալաւ մասը և թէ ականաւոր հասարակական գործիչներ։

Սակայն միաժամանակ գործում էին և խաւար ուժեր, այն սարկասէրները, որոնք չէին կարող հաշտուել ժողովրդին սարկութիւնից ազատելու մտքի հետ և ձգտում էին ամեն ինչ ետ շուռ տալ, դարձնել Ռուսիան դէպի այն խաւար, լուսազուրկ ժամանակները, երբ կեղեքուած ազգաբնակութիւնը կատարում էր լոկ բեռնակիր, լուռ անասնի դեր։ Ահա այդ խաւար ուժերը ոչ միայն արգիլեցին զարգանալու այն հիմունքներին, որ իբրև հիմք, դրուած էին 1864 թ. զեմստվոյի հիմնարկութիւնների կանոնադրութեան մէջ, այլ լիովին խեղդեցին նրանց «նոր կանոնադրութիւնով», որ ներմուծուեց 1890 թ. յուլիսի 12-ին։

Այդ «նոր կանոնադրութիւնը» ստեղծուած է՝

զեմստվոն բոլորովին աստիճանաւորական հիմնարկութիւն դարձնելու մտքով, որ կարելի է տեսնել ներքեւը առաջ բերած այն փոփոխութիւններից, որ նա մտցրեց 1864 թ. կանոնադրութեան մէջ։

Այսպէս, 1890 թ. կանոնադրութիւնը ընդունում է զեմստվոյի հիմնարկութիւնները պետական հիմնադրութիւններ և, դատական գործերի կողմից, ստորադրում է նրանց այն կանոններին, որպիսիք գոյութիւն ունին պետական հիմնարկութիւնների համար։

Յետոյ «Նոր կանոնադրութիւնը» ուժեղացրեց ադմինիստրացիայի վերահսկողութիւնը զեմստվոյի վրայ, նահանգապետին իրաւունք տուեց հսկելու՝ ոչ միայն զեմստվոյի հիմնարկութիւնների օրինական գործողութիւնների վրայ, այլ և կանոնաւոր գործողութիւնների վրայ, բացի այդ նահանգապետին իրաւունք տուեց քննել զեմստվոյի վարչութեան և նրան ստորադրուած բոլոր հիմնարկութիւնների գործերը, իսկ զեմստվոյի վճիռների և կարգադրութիւնների կանոնաւորութիւնը ստուգելու համար, հիմնուած է նոր հիմնարկութիւն, որ անուանւում է՝ նահանգական զեմստվոյի գործերի ատեան։

Այնուհետև 1890 թ. կանոնադրութիւնը նանաչեց զեմստվոյի պաշտօնավարութիւնը—պետական ծառայութիւն եւ հաստատեց զեմստվոյի վարչութիւնների նախագահի եւ անդամների պաշտօնատեղութիւնը ադմինիստրացիայի առաջ։

Վերջապէս, այդ կանոնադրութիւնով ներքին գործոց մինիստրին եւ նահանգապետին իրաւունք է տուած զեմստվոյի ժողովների ընտրած անձանց հաստատել նախագահի և անդամների պաշտօնների մէջ, մի և նոյն

ժամանակ ներքին գործոց մինիստրին իշխանութիւն է տուած որոշ դէպքերում այդ պաշտօնների մէջ նշանակել իր հաւանած մարդկանց։

Սակայն դրանով էլ չսահմանափակուեց 1890 թ. կանոնադրութիւնը, բացի զեմստվոյի հիմնարկութիւնները ադմինիստրացիային ստորադրելը, մտցրեց եւ այլ էական փոփոխութիւններ։

Այսպէս, օրինակ. «նոր կանոնադրութիւնով» աղնուականները ջոկուած են առանձին ընտրողական ժողով կազմելու և զեմստվոյի ժողովների մէջ աղնուականների թիւը այնքան է շատացրած, որ միւս մնացած դասակարգերից ընտրուած ձայնաւորների թիւը կիսից պակաս թիւ է կազմում։ Բացի այդ զեմստվոյի ընտրութիւններից բոլորովին հեռացրած են հոգեւորականութիւնը, հրէաները և փոքր բացառութիւնով հաւատարմութիւնով առաջ եկող ներկայացուցիչները։ Այս բոլորի շնորհիւ ժողովների մէջ ձայնաւորների ընդհանուր թիւը քչացաւ։ 1890 թ. առաջ եղող կալուածատէրերի և քաղաքացիների ժողովների տեղ, հիմնուած են երկու ընտրողական ժողովներ, որոնցից առաջինի մէջ մասնակցում են տոհմական և անձնական աղնուականներ, իսկ երկրորդում միւս ընտրողները։ Գիւղական ընտրողական ժողովները բոլորովին վերացած են և փոխարինած են վիճակի ժողովներով, միևնոյն ժամանակ, ցուցակով նշանակուած ձայնաւորների կազմը ընտրուածներից, հաստատում է նահանգապետը, որ որոշում է և միւս ընտրուածներին հերթով պաշտօնի մէջ մտնելը, եթէ հաստատուած-

ների թվից մինչև երեք տարին լրանալը դուրս գան ձայնաւորներ։

Հետևեալ փաստերը ականապէս ցոյց են տալիս, թէ ինչ թուական վնաս կրեց գիւղական ազգաբնակութիւնը 1890 թ. կանոնադրութիւնով։

Այդ կանոնադրութիւնով 30 զեմստվոյի նահանգներում ձայնաւորների կազմը այս ձևն ունի. առաջին ընտրողական ժողովից, այսինքն, տոհմական և անձնական աղնուականներից բացի գիւղականներից 57,1 % երկրորդից, այսինքն, միւս դասակարգերից. 13,3 % և գիւղական համայնքներից. 29,6 %։

Համեմատելով այդ թուերը նոյն թուերի հետ 1890 թ. առաջ, նախընթաց երեք տարուան ընթացքում, մենք տեսնում ենք որ աղնուականների թիւը շատացաւ 15 %-ով, իսկ գիւղականներինը պակասեց 8%-ով։ Առհասարակ նոր բաժանութիւնով գիւղականները իրանց պատկանած ներկայացուցիչների թվից կորցրին 2190 տեղ կամ 40,9 %։

Բացի դրանից 1889 թ. հիմնադրած «զեմսկիյ նաչալնիկները» գիւղականների ներկայացչութիւնը ոչնչութեան հասցրին։

Անմիջապէս այդ աստիճանաւորներից կախուած լինելով, գիւղականները վախում են նրանց ներկայութեանը կարծիքներ յայտնել, դեռ չասած, որ գիւղականներից ընտրուած ձայնաւորների հաստատութիւնը նահանգապետի կողմից, իհարկէ, կատարւում են նոյն զեմսկիյ նաչալնիկների զեկուցումներին համաձայն։

Թւում է թէ, բոլոր մեր առածից լեռոյ, այլ ևս տեղ չմնաց առաջանալու 1864 թ. կանոնադրութիւնը «փոխելու» ճանապարհով, թէ 1890 թ. կանոնադրութեան մէջ ամեն ինչ կատարած է զեմստվոյի գործունէութիւնը կրճատելու համար, սակայն ոչ, «կրճատումները» չարունակուեցին մինչև վերջին ժամանակներս։ Զեմստվոյի ձեռքից առնուեցաւ սնունդ հայթայթելու գործը, ոչնչացրած է ժողովրդին իր մէջ հարկեր բաժանելը, ստեղծուեցան զեմստվոյի գործունէութեան ահագին արգելքներ՝ ժողովրդական կրթութեան, բժշկութեան, առնասնաբուժութեան վերաբերմամբ և այլն, և այլն։

Բացի մեր բոլոր ասածը հարաւ—արևմտեան նահանգներում (Կիևի, Պոդոլի, Վոլինի և ուրիշների) մտցրած է զեմստվոյի նոր նմուշ, որ, ինչպէս երևում է ամենից աւելի դիւրեկան է իշխանութեանը։

Այդ զեմստվոներում իսպառ արդէն չկան ժողովրդից ընտրած մարդիկ, այլ ուղղակի վարչութիւնների մէջ ծառայում են նոյնպիսի աստիճանաւորներ, ինչպէս գիւանատներում, ոստիկանական վարչութիւնների մէջ և այլն։

Այսպիսով Ռուսիայում ինքնավարութիւնը ոչ միայն չզարգացաւ, այլ աստիճան առ աստիճան վայր ընկաւ և վերջ ի վերջոյ ոչնչութեան հասաւ։

Ընդհանրապէս կարելի է համարել, որ իսկական զեմստվո մենք երբէք չենք ունեցել։

Եւ լիրաւի, ինչ բան է իսկական զեմստվոն։ Զեմստվոն—այդ ոչ աւելի եւ ոչ պակաս ընդարձակ ինքնավարութիւն է, որի մէջ ընտրած ներկայացուցիչների միջոցով, պէտք է մասնակցէ ամբողջ ազգաբնակութիւնը։

Առանց ամբողջ ազգաբնակութեան մասնակ-

ցութեան իսկական զեմստվո ոչ մի կերպ չէ կարող լինել։

Չէ որ չի գտնվի ոչ մի մարդ, որ կապված չլինի որ և է վայրի՝ քաղաքի, գիւղի, արուարձանի հետ։

Իսկ մի անգամ ամեն մարդ կապված է որ և է տեղի հետ, ուրեմն անհնարին է կարծել, որ նրան օտար են «տեղական կարիքները և չահերը», ինչպէս այդ ասած է «կանոնադրութիւն զեմստվոյի հիմնարկութիւնների» մէջ։

Վեր առնենք սովորական կեանքից ամենաչնչին օրինակ։

Թոյլ տանք, թէ գետի վրայ կամուրջ չէ շինած և հարկաւոր է նրա հիւնով անցնել։ Հարկաւոր է միթէ ապացուցանել, որ այդտեղ կամուրջ շինելու հարցը հետաքրքրում է թէ հարուստին և թէ աղքատին, թէ անւանի և թէ հասարակ մարդուն, թէ քրիստոնիային և թէ հեթանոսին։

Ուրեմն, եթէ զեմստվոյի մէջ չէ մասնակցում գէթ մի հոգի, արդէն մէկի չահերին դիպած են, մէկի ձայնը չէ լսած և, ով գիտէ, կարելի է, նա ում չեն լսել, կը յայտնէր ամենախելօք մի բան։

Ինքնավարութեան վրայ այդ հայեացքը ունենալոց լեռոյ, կրկնում ենք Ռուսիայում իսկական զեմստվո երբէք չէ եղել։

1864 թ. զեմստվոյի կանոնադրութիւնը, ինչպէս մենք տեսանք, ներկայացնում էր միայն կեղծած զեմստվո, եթէ կարելի է այդպէս ասել։

Արժէ միայն լիշել, որ այդ կանոնադրութիւնով, գաւառական կալուածատէրերի ժողովում, կարող էին մասնակցել այն անձինք, որ միջին հաշուով ունէին ոչ պակաս 200 դեսեատինից հող կամ այնպիսի՛ք, որոնց ունելիքը գնահատւում էր 15,000 ր. կամ ձեռնարկութեան ընդհանուր եկամուտը հասնում էր 6,000 ր., արժէ միայն լիշել այդ բանը, որ ոչ մի կարծիք չմնայ, թէ 1864 թ. կանոնադրութեան մէջ խօսք էլ չկար զեմստվոյի մէջ ամբողջ ազգաբնակութեան մասնակցութեան մասին։

Սակայն այդպիսի զեմստվոն էլ հազիւ հազ քաշ տուեց 25 տարի գոյութիւն։

1890 թ. յունիսի 12 կանոնադրութիւնը դարձրեց նրան ուղղակի մի դասակարգի հիմնարկութիւն, գլխաւորապէս ազնուականութեան հիմնարկութիւն, մի և նոյն ժամանակ նահանգական և գաւառական վարչութիւնները դարձրած էին գիւանատոներ, բոլորովին ստորադրուած ադմինիստրացիային, որ հաստատում էր միայն իրան դիւրեկան նախագահներին և անդամներին։

Վերջապէս, ինչպէս մենք տեսանք, հարաւարևմտեան նահանգներում մտցրին «զեմստվոներ», որոնք ներկայանում են արդէն չար կատակ ինքնավարութեան դէմ։

Մեր բոլոր ասածներից պարզ է, որ Ռուսիայում նրա ամբողջ գոյութեան շրջանում ոչ միայն իսկական ինքնավարութիւն չէ եղել, այլ և նկատւում է այն երևոյթը, որ անհնարին է թոյլ տալ, որ և է Եւրոպայի կուլտուրական երկրում։

Իսկապէս, մենք տեսնում ենք, որ մեր հայրենիքում ինքնավարութիւնը առաջ չէր գնում, այլ ետ էր գնում։

Ինչով մեկնել այդպիսի անհեթեթութիւն։

Մենք կարծում ենք, որ պատասխանը շատ պարզ է, որովհետև, իսկապէս, չեչտած երևոյթի մէջ ոչ մի անհեթեթութիւն չկայ։

Ընդհակառակը, զարմանալի կը լինէր, եթէ մեզանում ինքնավարութիւնը առաջ գնար։ Մեր տէրութեան կազմը, չէ՞ որ զուտ բիւրոկրատիքական է կամ աստիճանաւորական, իսկ աստիճանաւորների իշխանութեան ժամանակ բոլորովին անհնար է ինքնավարութիւն, որովհետև վերջինը սահմանափակում է աստիճանաւորների կամայականութիւնը, որ նրանց շատ անախորժ է և անօգտաւէտ։

Ընդարձակ տեղական ինքնավարութիւն կարող է ծաղկել միայն նրան համապատասխանող ընդհանուր պայմանների տակ, որպէս կենսական մաս մի ամբողջութեան, որ կառուցած է նոյն ինքնավարութեան սկզբունքի վրայ։

Սրանից ակներև է, որ որպիսի զեմստվոյի բարեփոխումներ էլ որ ծրագրուին, նրանք կը սահին թեք մակերևոյթի վրայով դէպի կորուստ, ինչպէս գնում էին և մինչև մեր ժամանակը, մինչև որ ամբողջ տէրութեան կազմակերպութիւնը չբարեփոխի ինքնավարութեան հիմունքների վրայ։ Այդպիսի հայացքի հետ համաձայն են ամենալաւ զեմստվոյի գործունեիները։

Ահա, օրինակ. վերջին ժամանակը ինչ էր գրում մի ակնաւոր զեմստվոյի գործունեայ։

«Ամբողջ Ռուսիայի ներքին կեանքի ընորոշ կողմը մեր օրերում ներկայանում է լիովին պառակտումն իշխանութեան և հասարակութեան և

բացակայութիւն նրանց մէջ փոխադարձ հաւատընծայութեան։ Գործերի այդպիսի կարգ ստեղծում էր զանազան պատճառներով երկարատև ժամանակամիջոցում, բայց այժմս նա զգացւում է ամենաշօրեղ կերպով. մի կողմից վերջին տարիները աւելի սուր կերպով արտայայտեցաւ իշխանութեան գործունէութիւնը, որ տանում է դէպի լիշեալ պառակտումը սաստկացնելու, միւս կողմից՝ ծանր հանգամանքներ, որոնց մէջ գտնւում է Ռուսիան հեռի Արևելքի պատերազմի պատճառով, առանձին ակներևութիւնով մերկացրին մեր ներքին ցաւերը։ Եւ հիմա, առանց երկմտութեան հասաւ ժամանակը մտածել և խօսել այդ ցաւերը բուժելու մասին, որ լիովին որոշեցան, ակներև է, հասու ժամանակը գործել՝ պարզուած չարիքները հեռացնելու համար։

Մեզանում գոյութիւն ունեցող կարգերի չնորհիւ, իշխանութիւնը, որպէս ընդհանուր կանոն, զրկած է միջոցից իմանալ իսկական, էական ժամանակակից պահանջները, կարիքները և ցանկութիւնները ոչ միայն ազգի, այլ և նրա որ և է խաւի, դասի կամ դասակարգի վերաբերմամբ և հարկադրուած է գործել, հիմնուելով ընդհանրի բարիքի մտքով կամ ղեկավարուելով պատահական, մի և նոյն ժամանակ, անլուսալի աղբիւրներից բղխող տեղեկութիւններով՝ հասարակական չահերի և կարիքների վերաբերմամբ։

Գործող կարգերի հիմունքների վրայ ստեղծած լարաբերութիւնները չարունակ ամրացնում են իշխանութեան երկիւղը հասարակական գործունէութեան զարգացման դէմ, հարկադրում են հե-

ռացնել հասարակութիւնը որ և է մասնակցութիւնից տէրութեան ներքին կառավարութեան մէջ։ Հասարակական գործունէութեան փոխարէն մեր մէջ զարգացաւ ադմինիստրական կեդրոնացումն, հասարակութեանը՝ կառավարութեան մէջ մասնակցելու փոխարէն, ստեղծուեց խիստ խնամակալութիւն՝ հասարակական կեանքի բոլոր կողմերի վրայ։ Ամուր հաստատուած բիւրոկրատիքական կարգը, մշտական նախանձով հեռացնելով հասարակութեան նախաձեռնութիւնը, հասարակական մտքի արտայայտութիւնը, ասպարէզ ստեղծեց արտայայտելու ադմինիստրական կամայականութեան և անձնական հալեցողութեան։

Աւելորդ է առաջ բերել այստեղ՝ առանձին օրինակներ, մասնաւոր մանրամասնութիւններ։ բաւական կը լինի մատնացոյց լինել ընդհանուր բնաւորութիւն ունեցող երևոյթների և միջոցների վրայ։ Ցայտնի է, թէ ինչպիսի լիազօրութիւն է ստանում ադմինիստրացիան այն տեղերում, ուր մտցուում է զօրեղ պաշտպանութեան օրինադրութիւնը, յայտնի է նոյնպէս, որ դա ստեղծում է ամենալայնագոյն դեռին անպատկառ կամայականութեան, և միջոցները, որ դաղափարով նախապատրաստուած են տէրութեան ապահովութեան համար, գործադրուում են առանց քննելու այնպիսի դէպքերում, որոնք զերծ են որ և է քաղաքական նշանակութիւնից, բայց և այն դէպքերում, ուր գործը վերաբերում է քաղաքական կերպարանք ունեցող մեղապարտութիւնների, գործում է լայնարձակ կամայականութիւն, որպէս մեղապարտութիւնը որոշելու և

մեղապարտներին գտնելու մէջ, նոյնպէս նրանց վրայ այս կամ այն պատիժը դնելու մէջ։ Զօրեղ պաշտպանութեան օրինադրութիւնը, որ որոշ վայրի ազգաբնակութիւնը գնում է լիովին անպաշտպան պայմանների տակ, ինքը օրէնսդիրը այնքան անբնական է ճանաչում, որ նրան չէ կարելի մըցնել մի տարբալ ժամանակամիջոցից աւելի, սակայն, այդ ճմարտութեան և կանոնաւորութեան գաղափարին արած զիջումը, ունի միայն վերացական նշանակութիւն, որովհետև տարէցտարի զօրեղ պաշտպանութիւնը նորոգուում է նոյն տեղերում և միաժամանակ նրանց կցում են նոր տեղեր։ Բացի այդ այս կամ այն իրաւունքները զօրեղ պաշտպանութեան օրէնսդրութեան մէջ յանձնուում են այնպիսի տեղերի ադմինիստրացիային, որտեղ չեն յայտարարած այդ օրէնսդրութեան տակ գտնուելը, այնպէս որ ադմինիստրացիայի մասնաւոր զինաւորումը բացառիկ դէպքերի համար, քիչ քիչ դառնում է նրա ընդհանուր պատկանելիքը, բնական դրութեան միջոցին էլ։ Դրա հետ ի միասին ադմինիստրացիայի իշխանութիւնը ուժեղանում է մի որոշ չրջանում և տեղական ինքնավարութեան հիմնարկութիւնների վերայ դրուում են չարունակ ստուգացող և բարդուած բիւրոկրատիքական կամայականութեան ճնշումը։ Այդ բոլորը դեռ բաւական չէ համարում. ուղղակի հարց է դրուում նահանգապետների իրաւունքները աւելի ևս զօրեղացնելու մասին, թէպէտ այժմ էլ իրականութիւնը ապշեցնում է ադմինիստրացիայի բամբիռ կամայականութեան փաստե-

ռով այնպիսի տեղերում, ուր դրեղ պաշտպանութիւն չէ յայտնուած։

Իրերի այն դրութիւնը, որ այդպէս ցաւալի կերպով զգում են բոլորիքեան, կրկնակի նշանակութիւն ունի։ Նա տաժան կերպիւ արձագանք է գտնում բոլոր մասնաւոր, անձնական կեանքի վրայ, զրկում է որ և է հաւատից դէպի իրաքանչիւրի օրինական իրաւունքները խիստ պահպանելու վերաբերմամբ, մի և նոյն ժամանակ, նա վարակիչ կերպով ներգործում է հասարակական կեանքի, նրա ամեն մի արտայայտութեան վրայ։ Տեղի ունեցող բիւրոկրատիքական կարգի այդպիսի հետևանքները կանգնած են իրար հետ կապած։ Առանց անձնաւորութեան իրաւունքների անհրաժեշտ պաշտպանութեան՝ չէ կարող լինել ոչ լուրջ հասարակական նախաձեռնութիւն, ոչ կանոնաւորապէս դրած հասարակական գործունէութիւն։ Շատ կարելի էր խօսել մասնաւոր կեանքի իրաւունքների և կարիքների մասին, անձնական, նախաձեռնութիւնը կաշկանդող և ստորացնող կապերից ազատելու անհրաժեշտութեան մասին, այդ կացութիւնը բազմակողմանի զարգացնելու մասին, բայց այստեղ կը ցոյց դրին անձնաւորութեան և նրա արժանաւորութեան պաշտպանութեան միայն այնպիսի պահանջները, առանց որոնց անհնար է կանոնաւորապէս կազմակերպել, որ և է հասարակական գործունէութիւն։

Խղճի ազատութեան, խօսքի ազատութեան, մամուլի ազատութեան բացակայութիւնը ներկայանում է նոյնքան, որպէս պատճառ պառակտութեան

տէրութեան և հասարակութեան մէջ, որքան և հետևանք մեզանում հաստատած վարչութեան եղանակին՝ մեկուսանալ ժողովրդից։ Ժողովրդի համար, իհարկէ, անհանդուրժելիութիւնը՝ յայտնելու իր դաւանական համոզմունքները և արդելք բացարձակ և անկեղծ խոսելու տէրութեան և հասարակական գործերի մասին, ամենամեծ զրկանք է և կաշկանթումն, որոնց խիստ դառնութիւնը զգում է ոչ միայն հասարակութեան լուսաւոր դասը, այլ և ամբողջ ազգաբնակութիւնը։ Հասկանալի՞է, որ այդպիսի զգացմունքը սուր կերպարանք է տալիս հասարակութեան դժգոհութեանը։ Իսկ իշխանութեան համար՝ հաւատի ազատութեան և խօսքի ազատութեան բացակայութեան մէջ է դրած էական արդելքներից ամենամեծը՝ հաւատակշռել իր գործունէութիւնը տէրութեան իսկական կարիքների և պահանջների համաձայն և դա մեկուսացնում է նրան հասարակութիւնից։ Երկրի համար, նրան ամբողջապէս վեր առած, սա պատճառ է նրա խրոնիքական հիւանդութեան և նրա քաղաքական, կուլտուրական և տնտեսական տկարութեան։ Սակայն միւս կողմից, կաշկանթող քաղաքականութիւնը ազգի հոգեկան շահերի ասպարէզում, հաւատի, խօսքի, մամուլի ասպարէզում ներկայանում է անհրաժեշտ ուղեկից բիւրոկրատիքական կազմ ունեցող կառավարութեան համար։ Զրկելով երկրի կարիքները, այդ պատճառով ընկնելով մշտական հակաճառութեան մէջ կեանքի պահանջների հետ, ինքնիշխան բիւրոկրատիան, ինչպիսին նա ներկայանում է մեզանում, իր հզի-

նակութիւնը պաշտպանելու և եթէ կամենաք, երբեմն տերութեան մէջ, գոնեա, արտաքին կարգ պահպանելու համար, երբ նրա վճիռները անհրաժեշտ կերպով դիպչում են իրերի բնական ընթացքին, զրկած է ամեն կերպ բարոյական ուժից, չունի ուրիշ զէնք բացի հրամանը և հարկադրութիւնը։ Այդ զէնքով սկիզբը օգտւում են առանձին դէպքերում, բայց ժամանակին նա ուղղւում է բոլոր հակառակ մտածողների դէմ և, որովհետև անհնար է հնազանդեցնել մտքին, տիրապետել համոզմունքի զօրութիւնը, նա ճնշում է՝ խօսք և միտք, համոզմունք և դաւանութիւն արտայայտելու բոլոր միջոցներ, ստեղծում է զոհեր, կորուստ, անվերջ ժորտիրօզ։

Առհասարակ, անձնաւորութեան իրաւունքների անապահովութիւնը և նրանց դէմ լայնարձակ ադմինիստրատիւ կամայականութիւն գործ դնելու հնարաւորութիւնը, նոյնպէս անհրաժեշտ ուղեկից է ներկայանում բիւրոքրատիական կարգի, որը իսկապէս ուրիշ ոչ այլ ինչ է, բայց եթէ կազմակերպած ադմինիստրատիւ կամայականութիւն տերութեան կառավարչական բոլոր ճիւղերի մէջ։ Ադմինիստրացիայի ինքնիշխան վարչութիւնը տերութեան և հասարակական, գործերի մէջ, փաստօրէն մինչև անգամ այնտեղ, ուր օրէնքը և չէ արտօնում նրան կամայականութիւն քաղաքացու անձնաւորութեան վրայ, դառնում է կամայականութիւն անձնաւորութեան դէմ, որովհետև քաղաքական իրաւունքների անձեռնմխութեան ապահովութիւն կարող է լինել՝ հիմնարկութիւնների որոշ կազմակերպութիւնը։ Եւ ի միջի այլոց անկախ դատարանը ներկայանում է անհրաժեշտ պայմաններից մէկը, որպէս տերութեան կարգերի և մասնաւոր անձանց իրաւունքների պաշտպանող գործօն և այդ պատճառով դատարանի կանոնաւոր կազմակերպութիւնը և նրա լիովին անկախութիւնը ադմինիստրացիայից կազմում է տերութեան ամենակարևոր կարիքը և անձնաւորութեան քաղաքացիական իրաւունքների անհրաժեշտ պատսպարանը։

Այսպիսով, անհրաժեշտ է ներկայումս ստեղծել հետևեալ պայմանները՝ 1) խղճի ազատութիւն, լիովին բացակայութիւն հալածանքի՝ դաւանութեան և համոզմունքի առթիւ, 2) ազատութիւն խօսքի և 3) ազատութիւն մամուլի։

Այդ երեք հիմնական կանոնները պէտք է պաշտպանուին կրկին երկու կանոնով, որոնք այնպէս պէտք է ճանաչուին, որպէս հիմնական պահանջներ՝ 4) չկայ պատասխանատուութիւն. չկայ իրաւանց սահմանափակութիւն առանց դատական վճռի և 5) այդպիսի վճիռ պէտք է յայտնէ անկախ դատը։

Առանց յիշեալ կանոնների իսկական իրականացումը, որ անհրաժեշտ են անձնաւորութեան և հասարակութեան ապահովութեան համար, անհնարին է փոխել այժմեան կարգերը, հաստատել կենդանի կապ տերութեան և հասարակութեան մէջ, անհնարին է լիուլի միութիւն երկրի մէջ։ Իսկապէս, երբ խօսւում է մարդկային անձնաւորութեան ընդհանուր իրաւունքները հաստատելու անհրաժեշտութեան մասին, միաժամանակ ենթադրւում է, որ

այժմս գոյութիւն ունեցող իրաւունքների անհամատատութիւնը պէտք է ոչնչանալ, գիւղականի անձնաւորութիւնը, որ նոր է ազատուել ամոթալի մարմնական պատժից, ազատուի կաշկանթող ադմինիստրացիայի խնամակալութիւնից, որ գիւղական ինքնավարութիւնը իշխանութեան կամայական մէջ խառնուելուց անկախ դրուի, որ գիւղականների շահերը ապահովուած լինին կանոնաւոր կազմակերպուած դատարանով։

Ինչ վերաբերում է յատկապէս զեմստվոյի ինքնավարութեանը, նրա պտղաբեր գործունէութեանը, նրա բարեպէս զարգացման համար, բացի ցոյց տուած փոփոխութիւնները ընդհանուր պայմանների վերաբերմամբ, անհրաժեշտ է. 1) մոտեցնել զեմստվոն ազգաբնակութեանը մանր հողատիրական միաւորութիւն դոյացնելու միջոցով, եւ նա այնպէս դրուած լինի, որ իրականապէս նրան հնար տրուած լինի ինքնագործունէութեան սերտ կապ հաստատել զեմստվոյի ընդհանուր կազմակերպութեան հետ, 2) փոփոխել զեմստվոյի ընտրողական եղանակը, ոչ միայն դասակարգերից դուրս հիմքի վրայ, այլ եւ այն նպատակով, որ քաշէ դէպի զեմստվոյի գործունէութիւնը, որքան հնարաւոր է, տեղական ազգաբնակութեան բոլոր առ ձեռն ուժերը, 3) զեմստվոյի հիմնարկութիւնը այնքան ազատ դնել, որ ադմինիստրացիայի (կամ կանոնաւորապէս կազմակերպած ադմինիստրատիւ յիւստիցիային) իրաւունք տրուի հսկել վճիռների օրինականութեան վրայ, բայց ոչ մի իրաւունք՝ խառնուելու կամայականապէս գործի ընթացքին, 4) վերջապէս, զեմստվոյի գործունէութեանը պէտք է ապահովել ամրութիւն։

Այստեղ բաց է թողնում այդ հարցի մանրամասնութիւնները, զեմստվոյի հիմնարկութիւններին վերաբերեալ բոլոր գործող կանոնադրութիւնը ենթարկուելու է արմատական վերաքննութեան և փոփոխութեան, սակայն այստեղ անկարելի է չցոյց տալ զեմստվոյի գործունէութեան մի կողմի վրայ, այն է՝ ժողովրդական լուսաւորութեան գործի։ Պետութեան կեանքի կանոնաւոր ընթացքը հնարաւոր է, միայն ազգաբնակութեան մէջ լուսաւորութիւն տարածելիս։ Տեղական ինքնավարութեան շահերը և ընդհանուր մեր քաղաքական կեանքի շահերը կախած են ուսումնարանական հարցի կանոնաւոր դիրքից։ Անհրաժեշտ է, որ հասարակութեան իրաւունքները այդ ասպարէզում ընդարձակուած լինին, որ նրան յատկացուի՝ ոչ միայն ժողովրդական կրթութեան նիւթաւոր միջոցների հոգսերը, այլ և իրական կառավարութիւնը նրա հաշուով պահպանուող սկզբնական ուսումնարանների, նոյնպէս և այն, որ ուսումնարանը բաց լինի հասարակական տարրերի մեծ ազդեցութեանը։

Նոր իսկ թուած ընդհանուր օրինադրութիւնները, որ պէտք է իրագործուին ռուսական կեանքը նրա այժմեան տխրալի դրութիւնից դուրս բերելու համար, սրանք են՝ գիւղականների դրութեան բարեփոխութիւն, զեմստվոյի կանոնադրութեան բարեփոխութիւն, խղճի, խօսքի, մամուլի ազատութեան հաստատութիւն, պատժի բացակայութիւն առանց դատական վճռի, դատարանի անկախութիւն։ Սակայն սխալանք է կարծել, որ այդ միջոցներով կարելի լինէր սահմանափակուել, եթէ մինչև անդամ ի նկա-

տի ունենանք միայն տեղական ինքնավարութեան չահերը։ Զեմստվոյի գործունէութիւնը կը սահմանայ օրենքով՝ ընդարձակութիւն և ինքնակալունութիւն, սակայն ինչպէս տալ նրան անհրաժեշտ ամրութիւն։ Ի՞նչպէս ապահովել այն անձնական և հասարակական իրաւունքները, որոնց անհրաժեշտութիւնը վերևը ցոյց է տուած։

Այստեղ ներկայանում է մի ամենանշանաւոր և ամենաանհրաժեշտ պայման, առանց որին միւս պայմանները կորցնում են իրանց զօրութիւնը և նշանակութիւնը։ Անպայման հարկաւոր է՝ ժողովրդական ընտրուած ներկայացչութեան կանոնաւոր մասնակցութիւնը օրէնսդրութեան մէջ։ Առանց դրան չեն կարող հաստատուն և ապահովուած լինել վերևը ցոյց տուած անձնական և հասարակական իրաւունքները. նրանց համար դա անհրաժեշտ երաշխաւորութիւն է։ Բայց ինքնըստինքեան օրինադրութեան մէջ ժողովրդական ներկայացչութեան մասնակցութիւնը միակ միջոցն է, որ կարող է ապահովել փոխադարձ հաւասարակշռութեան և սերտ միութեան գոյութիւնը պետական իշխանութեան և հասարակութեան մէջ, միայն նա կարող է տալ՝ յաջորդականութիւն օրէնսդրական աշխատանքին, ապահովել նրա լուրջ արդասաւորութիւնը, լիուլի ամբողջութիւն, համապատասխանութիւն երկրի իսկական չահերին։ Անհրաժեշտ է, որ օրէնսդրական գործունէութիւնը չմնայ այլ ևս ամբողջովին բիւրոկրատիայի ձեռքում, որ հասարակութիւնը յանձին իր ընտրեալների մասնակից լինի այն հոգսերին, որոնք վերաբերում են պետութեան մէջ, կարգապահութեան և ժողովրդական բարեկեցութեան՝ օրէնքի հաստատուն հիմանց վրայ, որոնք պէտք է լինին ոչ միայն հաստատուն և որոշ, այլ և կենսացնուղ իմաստով լի. արդարութեան, համապատասխանող՝ ժամանակակից հասկացողութեան գիծ, մքտով։

Հ.Ս.Խ.Հ. ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ.Ս.Խ.Հ. Գ.Գ.Ա. Публичная Библиотека
7/XI--1922
անվան Մեսրոպ Մեսրոպյանի անվան
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0206784

40.275